ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ
## ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶԱՏ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» սեպտեմբերի 2023 թվական N 2352 -Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով՝ Օրենսգրքի 219[1] հոդվածով, 2023 թվականի սեպտեմբերի 14-ին–ին ժամը՝ 12:25-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանի (հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Ա.Գրիբայեդովի 2, անձնագիր՝ AT 0379377, ՀԾՀ 2608950043) ներկայությամբ, օրենսգրքի 277–րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248–րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278–279–րդ հոդվածներով սահմանված կարգով քննելով՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի օգոստոսի 23-ին կազմած՝ Ազատ Սամվելի Հակոբյանի կողմից օրենսգրքի՝ 162–րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023 թվականի օգոստոսի 23-ին Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի աշխատակիցներ՝ Լ. Գրիգորյանի, Ն.Անտոնյանի և Ս. Խաչատրյանի կողմից կազմվել է արձանագրություն այն մասին, որ քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանը Գյումրի քաղաքի, Պ.Սևակ փողոցի 2/4 հասցեում՝ ոչ սահմանված վայրում իրականացնում է առևտուր:

Քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտնեց, որ զղջում է կատարածի համար, արդեն իսկ վերացրել է վարչական իրավախախտման հետևանքները, ինչպես նաև նշեց՝ այսուհետ բացառելու է նմանօրինակ դեպքերի կրկնումը:

Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի (ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

## 3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ, 50-րդ հոդվածի 2-մասի «ա» կետով, 3–րդ մասով, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին մասով, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ, օրենսգրքի 33–րդ հոդվածի 1-ին և 2-րդ ենթակետերով, 282-րդ հոդվածի 2-րդ ենթակետով , 293–րդ հոդվածի 3–րդ ենթակետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:
3. Քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանին իրազեկել՝ հետագայում նմանօրինակ իրավախախտում կատարելու հետևանքների մասին:
4. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանին :
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ազատ Սամվելի Հակոբյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:
6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

18.09.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՆՈՐԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«19» «սեպտեմբերի» 2023 թվական N 2351 – Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի սեպտեմբերի Յ - ին ժամը 11:20-ին Գյումրի քաղաքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Նորայր Պետրոսյանի (անձն. AK0242613 ՀԾՀ հասցեն՝ ք.Գյումրի Ռուսթավելի փ.տուն 12) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի Նորայր Պետրոսյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2012-2023,2014-2023 և 2021-2023թթ. չվճարված հարկից.(հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 29682814057113904) տեղեկանքը:

Վճարման ենթակա գումարը 19.06.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 115.750 ( հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Քաղաքացի Նորայր Պետրոսյանից համայնքի բյուջե օգտին գանձել 115.750 ( հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
2. Քաղաքացի Նորայր Պետրոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նորայր Պետրոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

X

**Վ. Սամսոնյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2023 **թվական** N2350-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԱՐՏԻՆ ՌԱԴԻԿԻ ԳՈՄՑՅԱՆԻՆ, ՌՈԴԻԿ ՀՈՒՆԱՆԻ ԳՈՄՑՅԱՆԻՆ, ՎԱՐՎԱՐԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԳՈՄՑՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Ջոլբերտի Խոցանյանը (նույնականացման քարտ՝ 006166698 տրված՝ 18.07.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Մ.Խորենացի 26 շենք թիվ 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Մարտին Ռադիկի Գոմցյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի սեպտեմբերի 13-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ե.Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Մարտին Ռադիկի Գոմցյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2005 թվականի մարտի 28-ի թիվ 646 որոշմամբ Ե.Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեի բնակարանը հատկացվել է Վարվարա Գոմցյանի հինգ անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն, 3 տղային և տրվել թիվ 35 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2005 թվականի մարտի 28-ի թիվ 646 որոշմամբ տրված թիվ 35 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի օգոստոսի 30-ի N 8/63-712 գրությունը, «Նոր Անի» համատիրության 2023 թվականի սեպտեմբերի 13 -ի «01» 001 տեղեկանքը, Ռոդիկ Հունանի Գոմցյանի, Վարվարա Վլադիմիրի Գոմցյանի, Մարտին Ռադիկի Գոմցյանի, Հունան Ռոդիկի Գոմցյանի, Կարեն Ռադիկի Գոմցյանիլիազորագիրը Գյումրի համայնքից Ե.Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ

կետերի դրույթներով՝ 2023 թվականի սեպտեմբերի 13-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Մարտին Ռադիկի Գոմցյանի լիազորված անձ՝ Արմեն Ջոլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ե.Չարենցի փողոց 8 շենք, թիվ 35 հասցեի 78.14 (յոթանասունութ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 0809-08-0043 վկայական):

բ) Գյումրի համայնքի Ե.Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեի բնակարանը 2005 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2005 թվականի մարտի 28-ի թիվ 646 որոշում ):

գ) Շիրակ Գյումրի Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեում հաշվառված բնակվում են՝ Վարվարա Վլադիմիրի Գոմցյանը 2005 թվականից, Կարեն Ռադիկի Գոմցյանը 2007 թվականից, Ռոդիկ Հունանի Գոմցյանը 2008 թվականից, Մարտին Ռադիկի Գոմցյանը 2011 թվականից (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 30 -ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-712 գրություն, «Նոր Անի» համատիրության 2023 թվականի սեպտեմբերի 13-ի «01» 001 տեղեկանք) :

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Ռոդիկ Հունանի Գոմցյանի, Վարվարա Վլադիմիրի Գոմցյանի, Մարտին Ռադիկի Գոմցյանի, Հունան Ռոդիկի Գոմցյանի, Կարեն Ռադիկի Գոմցյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի N ԱՏ-11092023-99-0175 տեղեկանք):

ե) Քաղաքացի Մարտին Ռադիկի Գոմցյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Ե.Չարենցի փողոց 8 շենք թիվ 35 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականի մարտի 28-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք

բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով (վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Մարտին Ռադիկի Գոմցյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ե.Չարենցի փողոց 8 շենք, թիվ 35 հասցեի 78.14 (յոթանասունութ ամբողջ տասնչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

   1) Մարտին Ռադիկի Գոմցյանին ծնված՝ 1996 թվականին,
   2) Վարվարա Վլադիմիրի Գոմցյանին ծնված՝ 1960 թվականին,
   3) Ռոդիկ Հունանի Գոմցյանին ծնված՝ 1960 թվականին,

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Մարտին Ռադիկի Գոմցյանին, Վարվարա Վլադիմիրի Գոմցյանին, Ռոդիկ Հունանի Գոմցյանին:

3. Քաղաքացիներ Մարտին Ռադիկի Գոմցյանին, Վարվարա Վլադիմիրի Գոմցյանին, Ռոդիկ Հունանի Գոմցյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մարտին Ռադիկի Գոմցյանին, Ռոդիկ Հունանի Գոմցյանին, Վարվարա Վլադիմիրի Գոմցյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2023 **թվական** N 2349-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈԶԱ ԻԼՅԱՅԻ ՏԱԴՈՅԱՆԻՆ, ԷԼԵՈՆՈՐԱ ՀԱՄԼԵՏԻ ՏԱԴՈՅԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԼԵՏԻ ՏԱԴՈՅԱՆԻՆ, ԼԻԱՆԱ ԱՐՏՅՈՄԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ռոզա Իլյայի Տադոյանը (անձնագիր AS 0402430, տրված՝ 19.10.2018թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Երևանյան խճուղի 117 շենք 3 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատերեր), 2023 թվականի սեպտեմբերի 12-ին դիմում է ներկայացրել Գյումրու համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Երևանյան խճուղի 117 շենք թիվ 3 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով իր ընտանիքին օտարելու գործընթացը շարունակել:

Քաղաքացի Համլետ Սերյոժի Տադոյանը մահացել է 2023 թվականի հուլիսի 20-ին (հիմք՝ ԲԱ 732298 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի Շ-1331/6667/488 գրությունը, Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի օգոստոսի 30-ի N -8/62-1574 գրությունը, «Երևանյան 157ա» համատիրության 2023 թվականի հուլիսի 28-ի տեղեկանքը, Ռոզա Իլյայի Տադոյանի անձնագրի պատճենը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 19-ի եզրակացությունը, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 2-ի տեղեկանքը, Էլեոնորա Համլետի Տադոյանի, Հայաստան Համլետի Տադոյանի, իր և Արտյոմ Խուրշուդյանի անչափահաս դստեր՝ Լիանա Արտյոմի Խուրշուդյանի անունից լիազորագրերը Գյումրի համայնքից Երևանյան խճուղի 117 շենք թիվ 3 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ

կետերի դրույթներով՝ 2023 թվականի սեպտեմբերի 12-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ռոզա Իլյայի Տադոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 117 շենք թիվ 3 հասցեի 68.1 (վաթսունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 03072023-08-0043 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ 1964 թվականի քաղխորհրդի գործադիր կոմիտեի կողմից Երևանյան խճուղի 117 շենքի բնակարանների և թիվ 3 բնակարանի բաշխման նյութերը չեն պահպանվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2022 թվականի դեկտեմբերի 2 –ի Շ-3331/6667/488 գրություն):

գ) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 117 շենք թիվ 3 հասցեում հաշվառված են՝ Էլեոնորա Համլետի Տադոյանը 2001 թվականից, Հայաստան Համլետի Տադոյանը 2000 թվականից, Ռոզա Իլյայի Տադոյանը 1982 թվականից, Լիանա Արտյոմի Խուրշուդյանը 2019 թվականից (հիմք՝ Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի օգոստոսի 30-ի N -8/62-1574 գրություն, «Երևանյան 157ա» համատիրության 2023 թվականի հուլիսի 28-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Էլեոնորա Համլետի Տադոյանի, Հայաստան Համլետի Տադոյանի, Ռոզա Իլյայի Տադոյանի, Լիանա Արտյոմի Խուրշուդյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1999թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 9-ի N ԱՏ-09032023-99-0263, N ԱՏ-09032023-99-0378, 2023 թվականի ապրիլի 18-ի ԱՏ-18042023-99-0367 տեղեկանքներ):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 117 բազմաբնակարան շենքի թիվ 3 բնակարանի վնասվածությունը գնահատվում է առաջին-երկրորդ աստիճանի, մաշվածությունը՝ 20 տոկոս (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 19-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Համլետ Տադոյանը /ք. Գյումրի, Երևանյան խճ. 117 շենք, 3բն. / Գյումրի ցանցում բաժանորդ է հանդիսանում 2002թվականից մինչև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մայիսի 2-ի տեղեկանք):

է) Քաղաքացի Ռոզա Իլյայի Տադոյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարեցնելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Ռոզա Իլյայի Տադոյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 117 շենք թիվ 3 հասցեի 68.1 (վաթսունութ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

| | |
|---|---|
| 1) Ռոզա Իլյայի Տադոյանին | ծնված՝ 1957 թվականին, |
| 2) Էլեոնորա Համլետի Տադոյանին | ծնված՝ 1984 թվականին, |
| 3) Հայաստան Համլետի Տադոյանին | ծնված՝ 1983 թվականին, |
| 4) Լիանա Արտյոմի Խուրշուդյանին | ծնված՝ 2009 թվականին |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Ռոզա Իլյայի Տադոյանին, Էլեոնորա Համլետի Տադոյանին, Հայաստան Համլետի Տադոյանին, Լիանա Արտյոմի Խուրշուդյանին :
3. Քաղաքացիներ՝ Ռոզա Իլյայի Տադոյանին,Էլեոնորա Համլետի Տադոյանին, Հայաստան Համլետի Տադոյանին, Լիանա Արտյոմի Խուրշուդյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Ռոզա Իլյայի Տադոյանին, Էլեոնորա Համլետի Տադոյանին, Հայաստան Համլետի Տադոյանին, Լիանա Արտյոմի Խուրշուդյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

X

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«__19__» սեպտեմբերի______ 2023 **թվական** N_2348_-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ՎԱՐՈՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, ՄԵՍՐՈՊ ՎԱՐՈՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, ԵԼԵՆԱ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Վարդուհի Արամայիսի Եփրեմյանը (անձնագիր՝ AL 0294845, տրված՝ 20.06.2023թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Չարենցի փող. 31 շենք 18 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի սեպտեմբերի 6-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշմամբ Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեի բնակարանը հատկացվել է Մեսրոպ Մխիթարյանի վեց անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային, հարսին, երեք թոռանը և տրվել թիվ 18 միասնական օրդերը:

Քաղաքացիներ Մեսրոպ Վարոսի Մխիթարյանը և Վարոս Մեսրոպ Մխիթարյանը մահացել են (հիմք՝ ԱԱ 218009, ԲԱ 565986):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշմամբ տրված թիվ 18 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի 2023 թվականի օգոստոսի 3-ի N 8/12-1938 գրությունը, «Բարեկամություն» համատիրության 2023 թվականի հուլիսի 24 -ի N 0/51 տեղեկանքը, Վարդուհի Արամայիսի Եփրեմյանի անձնագրի պատճենը, Ելենա Մխիթարյանի, Դավիթ Վարոսի Մխիթարյանի, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի սեպտեմբերի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Վարդուհի Արամայիսի Եփրեմյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամաս Ե.Չարենցի փողոց 31 շենք, թիվ 18 հասցեի 88.73 (ութսունութ ամբողջ յոթանասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 08092023-08-0020 վկայական):

բ) Գյումրի համայնքի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեի բնակարանը 1999 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 1999 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 463 որոշում ):

գ) Ք.Գյումրի Ե.Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեում հաշվառված են՝ Վարդուհի Արամայիսի Եփրեմյանը, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանը, Դավիթ Վարոսի Մխիթարյանը, Ելենա Վարոսի Մխիթարյանը, Մարիա Ալբերտի Բրոյանը,Անաստասիա Ալբերտի Բրոյանը, բնակվում է 4 անձ (հիմք՝ 2023 թվականի օգոստոսի 3 -ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-1938 գրություն, «Բարեկամություն» համատիրության 2023 թվականի հուլիսի 24-ի N 0/51 տեղեկանք) :

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Վարդուհի Արամայիսի Եփրեմյանի, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանի, Դավիթ Վարոսի Մխիթարյանի, Ելենա Վարոսի Մխիթարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի հուլիսի 26-ի N ՍՏ-26072023-99-0344, 2023 թվականի սեպտեմբերի 5 N ՍՏ-05092023-99-0459 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Վարդուհի Արամայիսի Եփրեմյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Չարենցի փողոց 31 շենք թիվ 18 հասցեի բնակարանը վարձակալել է 1999 թվականի հոկտեմբերի 18-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Վարդուհի Արամայիսի Եփրեմյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամաս Ե.Չարենցի փողոց 31 շենք, թիվ 18 հասցեի 88.73 (ութսունութ ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

   1) Վարդուհի Արամայիսի Եփրեմյանին ծնված՝ 1956 թվականին,
   2) Դավիթ Վարոսի Մխիթարյանին ծնված՝ 1980 թվականին,
   3) Մեսրոպ Վարոսի Մխիթարյանին ծնված՝ 1979 թվականին,
   4) Ելենա Մխիթարյանին ծնված՝ 1986 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Վարդուհի Արամայիսի Եփրեմյանին, Դավիթ Վարոսի Մխիթարյանին, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանին, Ելենա Մխիթարյանին:
3. Քաղաքացիներ Վարդուհի Արամայիսի Եփրեմյանին, Դավիթ Վարոսի Մխիթարյանին, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանին, Ելենա Մխիթարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Վարդուհի Արամայիսի Եփրեմյանին, Դավիթ Վարոսի Մխիթարյանին, Մեսրոպ Վարոսի Մխիթարյանին, Ելենա Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

**2023թիվ Գյումրի համայնք**

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 3-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«19» սեպտեմբերի 2023 **թվական** N 2347-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՄԱՆՎԵԼԻ ԹԱՐԽԱՆՅԱՆԻՆ, ԱՆԺԵԼԱ ՄԱՆՎԵԼԻ ԹԱՐԽԱՆՅԱՆԻՆ, ԼԻԴԱ ՄԱՆՎԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ, ԺԱՆՆԱ ՄԱՆՎԵԼԻ ԹԱՐԽԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Միսակ Արմենակի Մելքոնյանը (անձնագիր՝ AR 0550270, տրված՝ 28.12.2017թ. 028-ի կողմից, հաշվառված՝ Շիրակի մարզ, գ. Հոռոմ, 8փ. 2նրբ. 3 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացի Հայկանուշ Վազգենի Թարխանյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 9-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ Բաղ 1ն/2 1 թաղ. 6 շենք թիվ 28 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Հայկանուշ Վազգենի Թարխանյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 2130 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1ն/2 1 թաղամաս 6 շենք 28 բնակարանում բնակության թույլտվության իրավունքով թույլատրվել է բնակվելու Մանվել Թարխանյանի 7 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, 3 աղջկան և տրվել թիվ 32 միասնական օրդերը:

Քաղաքացիներ Մանվել Ժորայի Թարխանյանը և Լիդա Արտաշեսի Թարխանյանը մահացել են (հիմք՝ N 1388, N 53 տեղեկանքներ մահվան ակտի գրանցման վերաբերյալ ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 2130 որոշմամբ տրված թիվ 28 միասնական օրդերը, 2023 թվականի հուլիսի 15-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-1760 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հուլիսի 18-ի տեղեկանքը, Հայկանուշ Վազգենի Թարխանյանի, Արթուր Մանվելի Թարխանյանի, Անժելա Մանվելի Թարխանյանի, Լիդա Մանվելի Մարգարյանի, Ժաննա Մանվելի Թարխանյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Վարդ բաղ 1ն/2 1 թաղամաս 6 շենք 28 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, ձեռագիր հայտարարություն:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ

հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 9-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Հայկանուշ Վազգենի Թարխանյանի լիազորված անձ՝ Միսակ Արմենակի Մելքոնյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Վարդ- բաղ 1 թաղամաս 6 շենք, թիվ 28 հասցեի 63.13 (վաթսուներեք ամբողջ տասներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1145463 վկայական)

բ) Գյումրի քաղաքի Վարդ- բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք թիվ 28 հասցեի բնակարանը 2007 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2007 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 2130 որոշում):

գ) Քաղաք Գյումրի Վարդ-Բաղ 1մ/շ 1 թաղամաս 6 շենք 28 հասցեում հաշվառված են՝ Վաղարշակ Աշոտի Ղազարյանը, Անժելա Մանվելի Թարխանյանը: Ըստ հարևանների գրավոր հայտարարության 2007 թվականից բնակվում է Միսակ Արմենակի Մելքոնյանի 5 անձից բաղկացած ընտանիքը (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 15-ի Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային բաժանմունքի N 8/12-1760 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հուլիսի 18-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ Արթուր Մանվելի Թարխանյանի, Անժելա Մանվելի Թարխանյանի, Լիդա Մանվելի Մարգարյանի, Ժաննա Մանվելի Թարխանյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 2023 թվականի օգոստոսի 11-ի N ԱՏ-11082023-99-0250, 2023 թվականի օգոստոսի 24-ի N ԱՏ-24082023-99-0504 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Հայկանուշ Վազգենի Թարխանյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ - Բաղ 1մ/շ 1 թաղ. 6 շենք թիվ 28 հասցեի բնակարանը վարձակալել է 2007 թվականի նոյեմբերի 14-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

### 2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Հայկանուշ Վազգենի Թարխանյանի լիազորված անձ՝ Միսակ Արմենակի Մելքոնյանի դիմումը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. Ք. Գյումրի Վարդ- բաղ 1 թաղամաս 6 շենք, թիվ 28 հասցեի 63.13 (վաթսուներեք ամբողջ տասներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Արթուր Մանվելի Թարխանյանին ծնված՝ 1993 թվականին,
2) Անժելա Մանվելի Թարխանյանին ծնված՝ 2001 թվականին,
3) Լիդա Մանվելի Մարգարյանին ծնված՝ 1992 թվականին,
4) Ժաննա Մանվելի Թարխանյանին ծնված՝ 1996 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համարօրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Արթուր Մանվելի Թարխանյանին, Անժելա Մանվելի Թարխանյանին, Լիդա Մանվելի Մարգարյանին, Ժաննա Մանվելի Թարխանյանին:
3. Քաղաքացիներ Արթուր Մանվելի Թարխանյանին, Անժելա Մանվելի Թարխանյանին, Լիդա Մանվելի Մարգարյանին, Ժաննա Մանվելի Թարխանյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Արթուր Մանվելի Թարխանյանին, Անժելա Մանվելի Թարխանյանին, Լիդա Մանվելի Մարգարյանին, Ժաննա Մանվելի Թարխանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

18.09.2023

**2023թվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2023 թվական N 2346-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արմեն Ջոլբերտի Խոցանյանը (նույնականացման քարտ՝ 006166698 տրված՝ 18.07.2017թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի, Մ.Խորենացի 26 շենք թիվ 48 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 23-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մուսայելյան փող. 78 շենք թիվ 3 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է `« Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի սեպտեմբերի 4 -ի Շ-2206/272 գրությունը, 2023 թվականի հուլիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ թիվ 230651065534, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի օգոստոսի 21-ի տեղեկանքները, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի հուլիսի 25-ի եզրակացությունը , ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի օգոստոսի 28-ի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, Կարեն Էդուարդի Սարիբեկյանի, Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի և Կարինե Կարապետի Հովհաննիսյանի լիազորագրերը Գյումրի համայնքից ք. Գյումրի Մուսայելյան փողոց 78 շենք թիվ 3 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, Կարեն Էդուարդի Սարիբեկյանի, Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի և Կարինե Կարապետի Հովհաննիսյանի նույնականացման քարտերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի

նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 23-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի լիազորված անձ՝ Արմեն Ջոլբերտի Խոցանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

### 1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս. Մուսայելյան փողոց 78 շենք, թիվ 3 հասցեի 44.37 (քառասունչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 25082023-08-0012 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի / Մուսայելյան փողոցի թիվ 78 շենք (կառուցված 1954թ.) բնակարանների բաշխման նյութերը չեն պահպանվել, հետևաբար վերոնշյալ շենքի թիվ 3 բնակարանը Էդուարդ Վարդանի Սարիբեկյանին հատկացնելու վերաբերյալ տեղեկատվություն չկա (հիմք՝ `«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի սեպտեմբերի 4 - ի Շ-2206/272 գրություն):

գ) Ք. Գյումրի Մուսայելյան փողոց 78 շենք 3 հասցեում հաշվառված բնակվում են՝ Էդուարդ Վարդանի Սարիբեկյանը 1979 թվականից, Կարինե Կարապետի Հովհաննիսյանը 1987 թվականից, Կարեն Էդուարդի Սարիբեկյանը 2013 թվականից (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 230651065534, և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի օգոստոսի 21-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի, Կարինե Կարապետի Հովհաննիսյանի,Կարեն Էդուարդի Սարիբեկյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր կողմից ՀՀ տարածքում Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի, Կարինե Կարապետի Հովհաննիսյանի անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, Գյումրի քաղաք,Շիրակացու 61-րդ գ/ա 11 դուս 19 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ: Կարեն Էդուարդի Սարիբեկյանի կողմից 1998թ. մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 25-ի N ԱՏ-25072023-99-0351, 2023 թվականի օգոստոսի 29-ի N ԱՏ-29082023-99-0268 տեղեկանքներ):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 78 շենք թիվ 3 հասցեում գտնվող բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝ պահանջվում է կատարել շենքի հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի հուլիսի 25-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Էդուարդ Վարդանի Սարիբեկյանը /ք. Գյումրի, Մուսայելյան փողոց 78 շենք, 3 բն./ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչ օրս (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի օգոստոսի 28-ի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ):

է)Քաղաքացի Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝

օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու

որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Քաղաքացիներ Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի, Կարինե Կարապետի Հովհաննիսյանի կողմից ՀՀ տարածքում 1998թ. մարտի 1-ից առ այսօր անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, Շիրակացու 61-րդ գ/ա 11 դուս 19 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Էդուարդ Վարդանի Սարիբեկյանի լիազորված անձ՝ Արմեն Ջուլբերտի Խոցանյանի դիմումը բավարարեց մասամբ:

## 3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս. Մուսայելյան փողոց 78 շենք, թիվ 3 հասցեի 44.37 (քառասունչորս ամբողջ երեսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Կարեն Էդուարդի Սարիբեկյանին ծնված՝ 1986 թվականին

   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Կարեն Էդուարդի Սարիբեկյանին :
3. Քաղաքացի Կարեն Էդուարդի Սարիբեկյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարեն Էդուարդի Սարիբեկյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«19» սեպտեմբերի 2023 թվական N 2345-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԼԻԶԱ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էլիզա Կարապետի Գրիգորյանը (անձնագիր AT 0359233 տրված՝ 016-ի կողմից 17.01.2020թ., հաշվառված՝ ք. Գյումրի Շիրակացու փողոց 27 դոս թիվ 6 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի օգոստոսի 28-ին դիմում է ներկայացրել Գյումրի . համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Շիրակացի 27 դոս, թիվ 6 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով որպես ընդհանուր բաժնային սեփականություն իր ընտանիքին օտարելու վերաբերյալ դիմումին ընթացք տալ:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի1986 թվականի ապրիլի 25-ի թիվ 8 որոշմամբ Շիրակացի 27 դոս թիվ (5)6 բնակարանը հատկացվել է Էլիզա Կարապետի Գրիգորյանի 4 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն , 2 տղային:

Քաղաքացիներ՝ Վարդան Կարապետ Գրիգորյանը և Կարապետ Գրիգոր Գրիգորյանը մահացել են (հիմք՝ ԲԱ 719655, ԲԱ 716923 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի1986 թվականի ապրիլի 25-ի թիվ 8 որոշմամբ տրված միասնական օրդերը, 2023 թվականի հունիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 23016016134 տեղեկանքը, 2023 թվականի հունիսի 22-ի «Գյումրի Կենտրոն» համատիրության տեղեկանքը, Էլիզա Կարապետի Գրիգորյանի անձնագրի, Սամվել Կարապետի Գրիգորյանի նույնականացման քարտի պատճենները, «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի հունիսի 12-ի տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 24-ի տեղեկանքը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 28-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի էլիզա Կարապետի Գրիգորյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա) Ք. Գյումրի Շիրակացի 27 դոս, թիվ 6 հասցեի 51.02 (հիսունմեկ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1148345 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Շիրակացի 27 դոս թիվ (5)6 բնակարանը 1986 թվականի ապրիլի 25-ից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի1986 թվականի ապրիլի 25-ի թիվ 8 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Շիրակացու փողոց 27 դոս 6 հասցեում հաշվառված են՝ էլիզա Կարապետի Գրիգորյանը 1986 թվականից, Սամվել Կարապետի Գրիգորյանը 1989 թվականից, Ասյա Ցոլակի Գրիգորյանը 1999 թվականից, էլիզա Սամվելի Գրիգորյանը 2011 թվականից (հիմք՝ 2023թվականի հունիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 23016016134 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հունիսի 22-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ էլիզա Կարապետի Գրիգորյանի, Սամվել Կարապետի Գրիգորյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ , 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 13-ի N ԱՏ-13032023-99-0450, N ԱՏ-13032023-99-0254 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի էլիզա Գրիգորյանը /ք. Գյումրի, Շիրակացի 27 դոս 6 բնակարան / Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից մինչև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի հունիսի 12-ի տեղեկանք):

զ) ՀՀ Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի Շիրակացի 27 դոս թիվ 6 հասցեի բնակարանը 1988 թվականի Սպիտակի երկրաշարժի ազդեցությունից տեխնիկական վիճակը գնահատվում է երրորդ աստիճան, այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն կապիտալ նորոգումից հետո (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 24-ի տեղեկանք):

է) Քաղաքացի էլիզա Կարապետի Գրիգորյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Շիրակացի 27 դոս թիվ (5)6 բնակարանը վարձակալել է 1986 թվականի ապրիլի 25-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

**2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում է համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Էլիզա Կարապետի Գրիգորյանի խնդրանքը բավարարել:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ**

1. Ք. Գյումրի Շիրակացի 27 դոս, թիվ 6 հասցեի 51.02 (հիսունմեկ ամբողջ երկու հարյուրերդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
    1) Էլիզա Կարապետի Գրիգորյանին ծնված՝ 1952 թվականին,
    2) Սամվել Կարապետի Գրիգորյանին ծնված՝ 1973 թվականին

    որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Էլիզա Կարապետի Գրիգորյանին, Սամվել Կարապետի Գրիգորյանին:
3. Քաղաքացիներ Էլիզա Կարապետի Գրիգորյանին, Սամվել Կարապետի Գրիգորյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Էլիզա Կարապետի Գրիգորյանին, Սամվել Կարապետի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**2023թիվ Գյումրի համայնք** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2023 թվականի N2394 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՂԱՓՆՅԱ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության լողափնյա վոլեյբոլի պատանիների և աղջիկների 2023 թվականի սեպտեմբերի 21–23-ը Արզնի քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության լողափնյա վոլեյբոլի պատանիների և աղջիկների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի սեպտեմբերի 21–23-ը քաղաք Արզնի գործուղել թվով 6 մարզիկի և 2 մարզիչի(համաձայն հավելվածի):
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածով օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թ.
[illegible] N 2296-Ն որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Լողափնյա վոլեյբոլի պատանիների և աղջիկների առաջնությանը **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

1. Նորյան Արմեն – մարզիկ,
2. Քոչարյան Արման – մարզիկ,
3. Աղանյան Վարուժան – մարզիկ,
4. Նահապետյան Արման – մարզիկ,
5. Նահապետյան Աննա – մարզիկ,
6. Մանուկյան Անահիտ – մարզիկ,
7. Մանուկյան Եղիշե – մարզիչ,
8. Ավետիսյան Հովհաննես – մարզիչ :

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՏՈՒՇ ԱՐԱՄԻ ԳևՈՐԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» սեպտեմբերի 2023 թվական N 2343 - Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի սեպտեմբերի 8 - ին ժամը 11:10-ին Գյումրի քաղաքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Արտուշ Արամի Գևորգյանի (անձն. ՀԾՀ հասցեն՝ ք.Գյումրի Թբիլիսյան խճ.2-րդ թաղ.տուն 55) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքաց Արտուշ Արամի Գևորգյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2017-2020թթ. չվճարված հարկից. (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 796743751231135830) տեղեկանքը:

Վճարման ենթակա գումարը 26.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 39.975( երեսունինն հազար ինն հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Արտուշ Արամի Գևորգյանից համայնքի բյուջե օգտին գանձել 39.975 (երեսունինն հազար ինն հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:
2. Քաղաքացի Արտուշ Արամի Գևորգյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արտուշ Արամի Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՆԱՐԻՆԵ ԵԳԱՆՅԱՆԻ, ՀԱԿՈԲ և ԱՐԹՈՒՐՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» «սեպտեմբերի» 2023 թվական N 2342 - – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի սեպտեմբերի 8 - ին ժամը 11:10-ին Գյումրի քաղաքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացիներ Նարինե Եգանյանի,Արթուր և Հակոբ Հարությունյանների (անձն. ՀԾՀ հասցեն՝ ք.Գյումրի Դեմիրճյան փ. 5-րդ նրբ. տուն 1) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացիներ Նաիրա Եգանյանի, Արթուր և Հակոբ Հարությունյանների անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2011-2020 և 2014-2020թթ. չվճարված հարկից. (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 79674373262714 1046) տեղեկանքը:

Վճարման ենթակա գումարը 26.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 27.000( քսանյոթ հազար ) ՀՀ դրամ:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպությունները ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Նաիրա Եգանյանից, Արթուր և Հակոբ Հարությունյաններից համայնքի բյուջե օգտին գանձել 27.000 (քսանյոթ հազար ) ՀՀ դրամ:
2. ՔաղաքացիՆարա Եգանյանին, Արթուր և Հակոբ Հարությունյաններին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Նաիրա Եգանյանին, Արթուր և Հակոբ Հարությունյաններին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

15.09.2022

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ X Վ. Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 3 22 001; Ֆաքս (+374 312) 3 26 06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» «սեպտեմբերի» 2023 թվական N 2341 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի սեպտեմբերի 8 - ին ժամը 11:20-ին Գյումրի քաղաքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Գագիկ Կարապետի Աբրահամյանի (անձն. ՀԾՀ հասցեն՝ ք.Գյումրի Կոմինտերնի 1 նրբ.փ.8 շենք) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքաց Գագիկ Կարապետի Աբրահամյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2012-2020 և 2008-2020թթ. չվճարված հարկ;ից.(հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 29683138375314141414) տեղեկանքը:

Վճարման ենթակա գումարը 26.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 64.098 ( վաթսունչորս հազար իննսունութ) ՀՀ դրամ:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Քաղաքացի Գագիկ Կարապետի Աբրահամյանից համայնքի բյուջե օգտին գանձել 64.098 (վաթսունչորս հազար իննսունութ) ՀՀ դրամ:
2. Քաղաքացի Գագիկ Աբրահամյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գագիկ Կարապետի Աբրահամյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. Սամսոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-001; Ֆաքս (+374 312) 3-26-05
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՈՀԱՐ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» «սեպտեմբերի» 2023 թվական N 2340 – Ա

## 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանս 2023 թվականի սեպտեմբերի 8 - ին ժամը 11:00-ին Գյումրի քաղաքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված և իրականացված դռնբաց վարչական վարույթի ընթացքում, քաղաքացի Գոհար Տիգրանի Սահակյանի (անձն. ՀԾՀ հասցեն՝ ք.Գյումրի Թումանյան փ. 24 շենք բն.) բացակայությամբ, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի,լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները պարզեցի.

## 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

Քաղաքացի Գոհար Տիգրանի Սահակյանի անշարժ գույքի հարկի պարտավորությունները Գյումրի համայնքի բյուջեի նկատմամբ առաջացել է անշարժ գույքի 2008-2020թթ. չվճարված հարկից.(հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի կողմից տրամադրված N 79674373000514716) տեղեկանքը:

Վճարման ենթակա գումարը 26.07.2023 թվականի դրությամբ կազմել է անշարժ գույքի հարկի գծով ընդամենը՝ 23.238 ( քսաներեք հազար երկու հարյուր քսաներկու) ՀՀ դրամ:

## 3. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Համաձայն՝ հարկային օրենսգրքի՝ (այսուհետ՝ Օրենսգիրք) 224-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեությունից

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք, բացառությամբ պետական մարմինների, համայնքային կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների, ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ հասարակական, արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների (ավտոկայանատեղիների, ավտոհանգրվանների) սեփականատերերին՝ բազմաբնակարան բնակելի շենքի սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ շենքի տակ գտնվող)՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասի և ընդհանուր օգտագործման տարածքների մասով:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հարկային պարտավորությունը Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինը, իսկ տեղական հարկերի ու տեղական վճարների մասով՝ տեղական ինքնակառավարման մարմինը իրավասու են Օրենսգրքի 19-րդ բաժնով սահմանված կարգով ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

4)տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նկատի ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենսգրքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 28–րդ հոդվածի 1–ին, 4–րդ մասերի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Գոհար Տիգրանի Սահակյանից համայնքի բյուջե օգտին գանձել 23.238 (քսաներեք հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ:
2. Քաղաքացի Գոհար Տիգրանի Սահակյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գոհար Տիգրանի Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշումը Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով ենթակա է հարկադիր կատարման՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ x Վ. Սամսոնյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2023 թվականի N 2339-Ա

## ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՎՐԵԺ ՎՐԵԺԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՄԱՐԻՅԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎՐԵԺ ՍՈՒՐԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանը (անձնագիր՝ AP0524169, տրված՝19.09.2016թ. 064-ի կողմից, հաշվառված ք.Գյումրի Ռ.Մելիքյան փողոց թիվ 42 հասցեի բնակելի տանը 2023թվականի օգոստոսի 17-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով իրեն և իր ամուսնուն՝ Վրեժ Սուրենի Մարտիրոսյանին (2անձ) սահմանված կարգով, որպես զոհված զինծառայող Վրեժ Վրեժի Մարտիրոսյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և հաշվառման վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական սոցիալական պաշտպանության և վետերանների գլխավոր վարչության 2020թվականի դեկտեմբերի 10-ի N 36/2351 տեղեկանքի և Վրեժ Վրեժի Մարտիրոսյանի մահվան մասին ԲԱ 320125 պետական վկայականի պատճենները, Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանի և Վրեժ Սուրենի Մարտիրոսյանի անձնագրերի, ամուսնության վկայականի պատճենները, Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 20.06.2023թ. N 8/62-1063 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 21.06.2023թ. N 1299 տեղեկանքը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, դրույթներով՝ 2023 թվականի օգոստոսի 17-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են Վրեժ Սուրենի Մարտիրոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

**ա)**Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանի որդին՝ Վրեժ Վրեժի Մարտիրոսյանը՝ զոհվել է 07.11.2020 թվականին մարտական գործողությունների ժամանակ (հիմք՝ ՀՀ ՊՆ ՁԱՍՊ և ՎՀ գլխավոր վարչության 10.12.2020թվականի N 36/2351 տեղեկանք և 18.11.2020թվականի ԲԱ320125 պետական վկայական մահվան մասին):

**բ)**Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանը 21/07/1995թվականից, Վրեժ Սուրենի Մարտիրոսյանը 19/08/1983թվականից հաշվառված բնակվում են Գյումրի քաղաքի Ռ.Մելիքյան փողոց թիվ 42 հասցեի բնակելի տանը, որտեղ հաշվառված են ևս 7(յոթ)անձ (հիմք՝ Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 20.06.2023թ. N 8/62-1063գրություն և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 21.06.2023թ. N 1299 տեղեկանք):

**գ)**Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումում մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ռ.Մելիքյան փողոց 42 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի միավոր գրանցված չէ(հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 21/07/2023թ. N ԱՏ-21072023-08-0533 տեղեկանք):

**դ)**Գյումրու /Լենինականի/քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1953թվականի նիստերի արձանագրություններում Սուրեն Հակոբի Մարտիրոսյանի անունով Ռ. Մելիքյան փողոցի թիվ 42 տունը կառուցելու թույլտվության որոշում չի հայտնաբերվել (հիմք՝«Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Շիրակ մարզային մասնաճյուղի 14.08.2023թ. Շ-2057/246 գրություն):

**ե)**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանի և Վրեժ Սուրենի Մարտիրոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998թվականի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ(հիմք՝ՀՀ կադաստրի կոմիտեի 08/06/2023թ. N ԱՏ-08062023-99-0179 և N ԱՏ-08062023-99-0180 տեղեկանքներ):

**2.Իրավական վերլուծություն և եզրահանգում**

Համաձայն Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի 20.06.2023թ. N 8/62-1063 գրության և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 21.06.2023թ. N 1299 տեղեկանքի զոհված զինծառայող Վրեժ Վրեժի Մարտիրոսյանի ծնողները՝Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանը 21/07/1995թվականից, Վրեժ Սուրենի Մարտիրոսյանը 19/08/1983թվականից հաշվառված բնակվում են Գյումրի քաղաքի Ռ.Մելիքյան փողոց թիվ 42 հասցեի բնակելի տանը, որտեղ հաշվառված են ևս 7(յոթ)անձ:

Հաշվի առնելով այն հանգամանքները, որ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանումում մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ռ.Մելիքյան փողոց 42 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի միավոր գրանցված չէ և «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Շիրակ մարզային մասնաճյուղում՝ Գյումրու /Լենինականի/քաղխորհրդի գործադիր կոմիտեի 1953թվականի նիստերի

արձանագրություններում Սուրեն Հակոբի Մարտիրոսյանի անունով Ռ. Մելիքյան փողոցի թիվ 42 տունը կառուցելու թույլտվության որոշում չի հայտնաբերվել և համապատասխան տեղեկատվություն չի կարող տրամադրել, ինչպես նաև Վրեժ Սուրենի Մարտիրոսյանի կողմից վարչական վարույթի ժամանակ վարչական մարմնին չի ներկայացվել տեղեկություն կամ հիմք հաստատող փաստաթուղթ Գյումրի քաղաքի Ռ.Մելիքյան փողոց թիվ 42 հասցեի բնակելի տան սեփականատիրոջ(կամ սեփականատերերի) վերաբերյալ, միայն բանավոր հայտարարվեց, որ Գյումրի քաղաքի Ռ.Մելիքյան փողոց թիվ 42 հասցեի բնակելի տունը կառուցվել է Վրեժ Սուրենի Մարտիրոսյանի հոր՝ Սուրեն Հակոբի Մարտիրոսյանի կողմից:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի №1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետի **բնակարանային ապահովության իրավունքից չեն օգտվում** այն անձինք, որոնք զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվանից առաջ՝ հինգ տարվա ընթացքում, օտարել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունները կամ փոխել են սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածությունների օգտագործման նպատակային նշանակությունը **կամ զինծառայողի՝ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող ճանաչվելու կամ զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ բնակվում են օրենքով սահմանված կարգով պետական գրանցում չստացած բնակելի տարածությունում** կամ օրենքով սահմանված կարգով ժառանգության բացումից հետո բնակելի տարածության նկատմամբ ունեն ժառանգական իրավունք, սակայն չեն հրաժարվել իրենց հասանելիք բնակելի տարածության նկատմամբ ժառանգության իրավունքից, ուստի քաղաքացի՝ Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանի դիմումը, որպես զոհված զինծառայող Վրեժ Վրեժի Մարտիրոսյանի ընտանիքի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում հաշվառելու վերաբերյալ ենթակա է մերժման:

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշման դրույթներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.**Քաղաքացիներ՝ Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանին և Վրեժ Սուրենի Մարտիրոսյանին,որպես զոհված զինծառայող Վրեժ Վրեժի Մարտիրոսյանի ընտանիքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական

կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում հաշվառելու վերաբերյալ դիմումը մերժել:

**2.**Քաղաքացիներ Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանին և Վրեժ Սուրենի Մարտիրոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Մարիյա Սերգեյի Մարտիրոսյանին և Վրեժ Սուրենի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. Գյումրի համայնք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2023 թվականի N2338-Ա

## ՄԱՀԱՑԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՄՎԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ԱԶԱՏՈՒՀԻ ՄԱՆՎԵԼԻ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ, ՍՈՖԻԿ ԺՈՐԺԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՍՈՖՅԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ազատուհի Մանվելի Զաքարյանը (անձնագիր՝ AV0221706, տրված՝18.05.2022թ. 064-ի կողմից, հաշվառված ք.Գյումրի Թբիլիսյան խճուղի 6ա շենք, թիվ 8 հասցեի բնակարանում)2023թվականի սեպտեմբերի 06-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով իրեն, Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանին, Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանին և Արման Հովհաննեսի Հովհաննիսյանին (4անձ) սահմանված կարգով, որպես մահացած զինծառայող Հովհաննես Սամվելի Հովհաննիսյանի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և հաշվառման վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության 17.07.2023թվականի N36/1783, N36/1784, N36/1785, N36/1786 տեղեկանքների, 08.05.2023թվականի ԲԱ702863 պետական վկայական մահվան մասին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մահվան պատճառական կապի N2023.ՄԿՊ-6-5 որոշման պատճենները,Ազատուհի Մանվելի Զաքարյանի, Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանի անձնագրերի, ամուսնության վկայականների պատճենները, Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանի և Արման Հովհաննեսի Հովհաննիսյանի ծննդյան վկայականների պատճենները, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 23.08.2023թվականի N 230652065242 N230652065243, N230652065244, N230652065245, «Գյումրի Կենտրոն» համատիրության 30.08.2023թվականի և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 30.08.2023թվականի. N 1946 տեղեկանքները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, դրույթներով՝ 2023թվականի սեպտեմբերի 06-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի սեպտեմբերի 14-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Ազատուհի Մանվելի Զաքարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

## 2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

**1.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

**ա)**Ազատուհի Մանվելի Զաքարյանի ամուսինը՝ Հովհաննես Սամվելի Հովհաննիսյանը մահացել է 07.05.2023թվականին՝ զինծառայության ընթացքում ստացած հիվանդության հետևանքով (հիմք՝ ՀՀ ՊՆ ԶՄՊՎ 17.07.2023թ. N36/1783, N36/1784, N36/1785, N36/1786 տեղեկանքներ, ԲԱ702863 պետական վկայական մահվան մասին, տրված՝ 08.05.2023թ. և ՀՀ ԱՍՀՆ մահվան պատճառական կապի որոշում N2023.ՄԿՊ-6-5):

**բ)**Ազատուհի Մանվելի Զաքարյանը, աղջիկը՝ Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանը (ծնված՝26.04.2010թ.) և տղան՝ Արման Հովհաննեսի Հովհաննիսյանը (ծնված՝17.03.2016թ.) 18/11/2020թվականից հաշվառված բնակվում են ք.Գյումրի Թբիլիսյան խճուղի 6Ա շենք, թիվ 8 հասցեի բնակարանում(հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 23.08.2023թ. N230652065243, N230652065244, N230652065245 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 30.08.2023թ. տեղեկանքներ):

**գ)**Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանը 19/02/1981թվականից հաշվառված բնակվում է ք.Գյումրի Կ.Խաչատրյան փողոց թիվ 21 հասցեի բնակելի տանը(հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 23.08.2023թ. N230652065242 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 30.08.2023թ. N 1946 տեղեկանքներ):

**դ)**Գյումրի քաղաքի Կ.Խաչատրյան փողոց 21 (Պողպատավան 2-րդ շարք 21տուն)հասցեով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գրիգոր Սիրեկանի Հովհաննիսյանին (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 01/09/2023թ. N ԱՏ-01092023-08-1044 տեղեկանք):

**ե)**Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 6ա շենք, 8 հասցեով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է քաղաքացի Քնարիկ Շահումյան Լևոնի անվամբ (հիմք՝ՀՀ կադաստրի կոմիտեի 01/09/2023թ. NԱՏ-01092023-08-1028 տեղեկանք):

**զ)**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Ազատուհի Մանվելի Զաքարյանի, Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանի և Արման Հովհաննեսի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, իսկ 1998թվականի մարտի 1-ից առ այսօր քաղաքացի Ազատուհի Մանվելի Զաքարյանի կողմից կնքված անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում Արագածոտնի մարզ համայնք Ծաղկահովիտ գյուղ Գեղաձոր 9-րդ փողոց թիվ 5 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ կատարվել է 02.07.2018թ. /օտարման հիմք՝ 27.06.2018թ.կնքված նվիրատվության պայմանագիր/(հիմք՝ՀՀ կադաստրի

կոմիտեի 25/08/2023թ. N ԱՏ-25082023-99-0577 և 30/08/2023թ.N ԱՏ-30082023-99-0748 տեղեկանքներ):

**է)**Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998թվականի մարտի 1-ից առ այսօր ՀՀ տարածքում վերոնշյալ քաղաքացու կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ(հիմք՝ՀՀ կադաստրի կոմիտեի 25/08/2023թ. N ԱՏ-25082023-99-0415 տեղեկանք):

## 3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «ՀՀ ՊՆ համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշման դրույթներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

**1.**Մահացած զինծառայող Հովհաննես Սամվելի Հովհաննիսյանի ընտանիքին՝ վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.

**1) Ազատուհի Մանվելի Զաքարյանին(կինը), ծնված՝1986թվականին,**
**2) Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանին(մայրը),ծնված՝1955թվականին,**
**3) Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանին(աղջիկը),ծնված՝2010թվականին,**
**4) Արման Հովհաննեսի Հովհաննիսյանին(տղան),ծնված՝2016թվականին**

**2.**Քաղաքացիներ Ազատուհի Մանվելի Զաքարյանին, Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանին Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանին և Արման Հովհաննեսի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

**3.**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ազատուհի Մանվելի Զաքարյանին, Սոֆիկ Ժորժիկի Հովհաննիսյանին Սոֆյա Հովհաննեսի Հովհաննիսյանին և Արման Հովհաննեսի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

18.09.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. Գյումրի համայնք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՄԻՇԱՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«--18--» «--սեպտեմբերի--» 2023թվական N 2337 - Ա

### 1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար՝ Վարդգես Սամսոնյանս, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 275-րդ հոդվածով սահմանված կարգով, վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննության նախապատրաստելով, ղեկավարվելով Օրենսգրքի 219.1 հոդվածով, 2023թվականի սեպտեմբերի 14-ին Գյումրի քաղաքում, դռնբաց վարույթի ընթացքում, քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանի մասնակցությամբ Օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված ժամկետների պահպանմամբ, 248-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով և 278-279-րդ հոդվածներով սահմանված կարգով, քննելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից 2023 թվականի սեպտեմբերի 31-ին կազմած քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանի կողմից Օրենսգրքի՝ 154-րդ հոդվածի 3–րդ մասով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը, պարզեցի.

### 2. ԳՈՐԾԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

### ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

2023թվականի սեպտեմբերի 31-ին բացահայտվել և տեղում արձանագրվել է, որ քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանի կողմից Գյումրի քաղաքի, Ե. Չարենցի փ.

թիվ 1 շենքի բակում Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ շինություն է կառուցվել, որով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը, այսինքն կատարվել է վարչական իրավախախտում, որը նախատեսված է Օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով:

Գյումրի քաղաքի, Ե. Չարենցի փ. թիվ 1 շենքի բակում, Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում իրականացվել են ինքնակամ շինարարական աշխատանքներ, բացի այդ դրանցով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինությունից:

Բացի այդ, տվյալ ինքնակամ շինությամբ ծանրաբեռնված հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման տարածք, այսինքն այն կառուցված է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչից բխում է, որ ինքնակամ շինության առկայությունը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքին ու առողջությանը, այսինքն՝ վարչական ակտի հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող կառավարության որոշմամբ (այսուհետ սույն հոդվածում նաև՝ Կառավարության որոշում) սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները: Կառավարության կողմից կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) օրինականացման առանձնահատկություններ:

Ըստ այդմ, իրավահարաբերության ծագման պահին գործող քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի խմբագրության համաձայն, ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Վերը նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն, ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները չեն կարող

ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման խմբագրության 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

Նույն որշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե՝ դրանք չեն բավարարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հողամասերն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ: Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի խմբագրության 5-րդ մասի համաձայն, Համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ 8) կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանը վարույթի լսումներին հայտնեց, որ նշված հասցեում շինարարական աշխատանքներն իրականացվել են իր կողմից, դրանք ավարտվել են մինչև 2023թվականի հունիսի 20–ը, որպես ապացույց ներկայացվեց տվյալ շենքի թվով վեց բանկիչների կողմից համապատասխան գրավոր հայտարարություններ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն, վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Նույն օրենսգրքի 247-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին սույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն, եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Նույն օրենքի 60–րդ հոդվածի համաձայն, գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 43–րդ հոդվածի 2–րդ մասի, 44–րդ հոդվածի 2–րդ մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Քաղաքաշինության մասին» օրենքի 26–րդ հոդվածի 5–րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 35-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետի, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37–րդ, 247-րդ հոդվածի 7-րդ կետի, 282-րդ հոդվածի 2-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18–ի N 912–Ն որոշման պահանջները՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանի նկատմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը տույժի մասով կարճել:

2. Չօրինականացնել Գյումրի քաղաքի Ե. Չարենցի փ., թիվ 1 հասցեի շենքի բակում, առանց հողօգտագործման իրավունքի պետական գրանցման օգտագործվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ապօրինի կառուցված շինությունը:
3. Պարտավորեցնել քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել ինքնակամ շինարարության հետևանքների վերացումը:
4. Նշված ժամկետում ինքնակամ շինարարության հետևանքները չվերացվելու դեպքում՝ հանձնարարել Գյումրի համայնքի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնին և Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին ապամոնտաժել վերոնշյալ հասցեում ապօրինի կառուցված շինությունը և անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
5. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գյումրի քաղաքի վարչության պետին՝ Գյումրու համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
6. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ կառույցն իրականացրած անձից:
7. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացի Տիգրան Միշայի Պետրոսյանին:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցման պահից:
9. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Կ. Սամսոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«15» սեպտեմբերի 2023 թվականի N 2336 Ա

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԱՅԱՆԵ ՎԱՂԻՆԱԿԻ ՄՈՒՍԻԿՅԱՆԻՆ ԻՐ ԵՂԲՈՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՎԱՂԻՆԱԿ ԱՐՏՅՈՄԻ ՄՈՒՍԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2023 թվականի օգոստոսի 31-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 24/3 տան բնակիչ՝ Գայանե Վաղինակի Մուսիկյանը (նույնականացման քարտ՝ 006981526)՝ խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր եղբոր անչափահաս երեխայի՝ 07.09.2020 թվականին ծնված Վաղինակ Արտյոմի Մուսիկյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ292233) նկատմամբ:

Երեխայի մայրը՝ Շուշանիկ Սամվելի Փիրումյանը 2020 թվականից հաշվառված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ում (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 31.08.2023 թվականին N596):

Շուշանիկ Սամվելի Փիրումյանը բուժում է ստացել «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում և վերադարձել է 07.09.2023 թվականին:

Հարցի քննարկումը հետաձգվել է, քանի որ նա ստանձնել է որդու խնամքը:

2023 թվականի սեպտեմբերի 11-ին Շուշանիկ Սամվելի Փիրումյանը հիվանդության սրացման հետևանքով տեղափոխվել է «Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ:

Կրկնակի ուսումնասիրությունից հետո առաջարկվեց հորաքրոջը՝ Գայանե Վաղինակի Մուսիկյանին նշանակել խնամակալ (հիմք՝ արձանագրություն տրված՝ 12.09.2023 թվականին):

Գայանե Վաղինակի Մուսիկյանի բանավոր հայտարարությամբ երեխայի հայրը՝ Արտյոմ Վաղոյի Մուսիկյանը ժամանակավորապես մեկնել է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 31.08.2023 թվականին տրված տեղեկությունների համաձայն՝ Գայանե Վաղինակի Մուսիկյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի Գայանե Վաղինակի Մուսիկյանը իր եղբոր անչափահաս երեխայի՝ Վաղինակ Արտյոմի Մուսիկյանի հետ բնակվում է Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 24/3 տանը (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 31.08.2023 թվականին N.1958):

Ելնելով անչափահաս՝ Վաղինակ Արտյոմի Մուսիկյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով,

հիմք ընդունելով քաղաքացի՝ Գայանե Վաղինակի Մուսիկյանի 2023 թվականի օգոստոսի 31-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 18346 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել խնամակալություն, Գայանե Վաղինակի Մուսիկյանին (նույնականացման քարտ՝ 006981526) նշանակել խնամակալ իր եղբոր անչափահաս երեխայի՝ 07.09.2020 թվականին ծնված Վաղինակ Արտյոմի Մուսիկյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ292233) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Վաղինակի Մուսիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ